



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ
ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ**

ՄԱՐՄԻՆ

ԱԿՏ N Հ/ 986-2021

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՍՏՈՒԳՄԱՆ**

ք.Արտաշատ

« 01 » հոկտեմբերի 2021թ.

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) Արարատի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ Հրահատ Ալեքսանյանս և նույն բաժնի ավագ մասնագետ Զարգանդ Ավագյանս «ԱՐԱՐԱՏԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊ ընկերության տնօրեն Սեդրակ Սարգսյանի (ՀՀ նույնականացման քարտ՝ 00501122, տրված՝ 07.02.2013թ., 026-ի կողմից) ներկայությամբ, Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2021 թվականի օգոստոսի 2-ի N Հ/986-2021 հանձնարարագրի հիման վրա 2021 թվականի սեպտեմբերի 7-ից 9-ը ներառյալ, տեխնիկական և հրդեհային անվտանգության պահանջների պահպանման վերաբերյալ ստուգում ենք իրականացրել ՀՀ Արարատի մարզ, գ.Արարատ, Րաֆֆու փողոց հասցեում գտնվող «ԱՐԱՐԱՏԻ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊ ընկերությունում (այսուհետ Ընկերություն), ՀՎՀՀ՝ 04106807:

Ստուգումն իրականացվել է 2020 թվականի սեպտեմբեր ամսից մինչև 2021 թվականի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի համար՝ համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1025-Ն որոշմամբ հաստատված ստուգաթերթերի N 12 հավելվածի, որը պարունակում է 40 հարց: Նշված 40 հարցերից դրական պատասխան է ստացել 27-ը, բացասական՝ 3-ը, կիրառելի չէր 10-ը:

Արձանագրված թերությունների և խախտումների վերաբերյալ 14.09.2021 կազմվել է ակտի նախագիծ, որը նույն օրը առձեռն ներկայացվել է տնտեսվարողին, սակայն վերջինս հրաժարվել է այն ստորագրելուց: 16.09.2021-ին ՔՏՄ/16.3/11712-21 գրությամբ ակտի նախագիծը առաքվել է փոստային ծառայության միոցով, ինչպես նաև տեղադրվել է Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքում, հրապարակային ծանուցման նույնականացման համարն է 933695:

Ակտի նախագծի փոստային առաքման կողմ է DLE0100227278AM, որը հանձնվել է տնտեսվարող սուբյեկտին 24.09.2021թ. (առկա է Հայփոստի պաշտոնական կայք-էջի քաղվածքը՝ նամակի առաքման ընթացքի վերաբերյալ):

Ակտի նախագծի վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում չեն ներկայացվել առարկություններ և առաջարկություններ:

Ստուգման արդյունքում կազմվել է ակտ այն մասին, որ Ընկերությունում պահպանված չեն ստուգաթերթով նախատեսված հետևյալ կետերը՝

1) **Կետ 34** - Ընկերության տարածքը սարքավորված չէ հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերով՝ համաձայն ՀՀ ՏԿԱԻ նախարարի՝ 2015 թվականի հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների» (1-ին հավելված) (այսուհետ՝ ՀԱԿ) 1-ին բաժնի 7-րդ գլխի 81-րդ կետի:

(Խախտումն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածի):

2) **Կետ 35** - Ընկերության տարածքը սարքավորված չէ հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերով, ուստի ապահովված չէ հրդեհի տազնապի ազդանշանի՝ Լիազոր մարմնին փոխանցվելու պահանջը՝ համաձայն ՀԱԿ 1-ին բաժնի 7-րդ գլխի 81-րդ կետի:


(Խախտումն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածի):

3) **Կետ 36**- Ընկերության տարածքը սարքավորված չէ հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերով, ուստի ապահովված չէ դրանց՝ սարքին վիճակում գտնվելու պահանջը՝ համաձայն ՀԱԿ 1-ին բաժնի 7-րդ գլխի 100-րդ կետի:

(Խախտումն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածի):


(տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունների վերաբերյալ նշումներ)

Ակտը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնցից մեկ օրինակը հանձնվում է Ընկերության տնօրեն Սեդրակ Սարգսյանին, մյուս օրինակը մնում է Տեսչական մարմնում:

Մասնագետ(ներ)՝ 
(ստորագրություն)


(ստորագրություն)

(ստորագրություն)


(անուն, ազգանուն)


(անուն, ազգանուն)

(անուն, ազգանուն)

Ակտի մեկ օրինակը ստացա՝

(պաշտոնը, ստորագրություն, անուն, ազգանուն)